

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵՎ ԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՂԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Արմեն Հովհաննիսյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,*

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական (armen_hovhannisian@mail.ru)

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի (այսուհետ՝ նաև Գործող օրենսգրք կամ ՔԴՕ) 426.5-426.7-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքների հիմքերով վերջնական դատական ակտերի բողոքարկման ընթացակարգը կազմված է երկու առանձին վարույթներից՝ դատական բողոքարկում և դատախազական քննություն՝ որպես դատական բողոքարկման նախնական փուլ:

Դատախազական քննության ընթացակարգը, այսինքն՝ նոր երևան եկած հանգամանքներով վերջնական դատական ակտերի վերանայման նախնական վարույթը, կանոնակարգվել է ՔԴՕ 426.5-426.6-րդ հոդվածներով, որոնց ուսումնասիրության արդյունքում ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ քննարկվող վարույթի նախատեսման նպատակը նոր երևան եկած հանգամանքի առկայությունը պարզելը և դրա արդյունքների հիման վրա դատական ակտի վերանայման բողոք դատարան ներկայացնելու հարցը լուծելն է:

Մինչ այս վարույթի առանձնահատկությունների քննարկումը անդրադառնանք վերջինիս առանձին հիմնախնդիրներին:

Այսպես, ինչպես նշեցինք, նոր երևան եկած հանգամանքների հիմքերով վերջնական դատական ակտերի բողոքարկման ընթացակարգը բաղկացած է երկու վարույթներից: Դրանցից մեկը պարտադիր է (դատական բողոքարկում), իսկ մյուսը՝ քննարկվող վարույթը՝ կամընտիր (ֆակուլտատիվ), ինչի մասին է վկայում ՔԴՕ 426.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 426.7-րդ հոդվածի վերլուծությունը:

Ասվածից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքներով նախնական վարույթը կարող է նախորդել դատական բողոքարկմանը, սակայն հնարավոր է նաև, որ շահագրգիռ անձի կողմից բողոք ներկայացվի ուղղակի իրավասու դատարան՝ շրջանցելով նախնական վարույթի փուլը¹: Այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչքանով է արդյունավետ նման կարգավորումը: Ռա պարզելու համար հարկ ենք համարում անդրադառնալ նախնական վարույթ հարուցելու հիմքերին:

Այսպես, նախ նշենք, որ ՔԴՕ 426.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հետևում է, որ օրենսդիրը քննարկվող վարույթը նախատեսել է նոր երևան եկած հանգամանքների բոլոր հիմքերի համար: Ինչպես հայտնի է, նոր երևան եկած հանգամանքների առաջին երեք հիմքերը պահանջում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատում, ինչը վկայում է, որ հանգամանքի առկայությունը պարզելու համար այլևս առկա չէ լրացուցիչ քննություն կատարելու անհրաժեշ-

¹Տե՛ս Դատավորի ձեռնարկ, գիտագործնական վերլուծություն, (հեղ. խումբ), Երևան, 2010թ., էջեր 363-364:

տությոսն: Իսկ այդ ժամանակ դատախազական քննության իրականացումը, մեր կարծիքով, արդեն իսկ դառնում է աննպատակահարմար, քանի որ նախնական վարույթի հիմնական նպատակը՝ քննություն իրականացնելու միջոցով հանգամանքի առկայությունը պարզելը, ինքնաբերաբար վերանում է:

Դա վկայում է, որ այդ հիմքերով ուղղակի դատարան բողոք ներկայացնելը հիմնավոր է, ինչը հաստատում են նաև Վ.Ա. Դավիդովը, Յա.Ե. Ֆիլևը և այլք¹:

Նույնը, սակայն, չի կարելի ասել Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքի մասին, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, սույն հիմքը, ի տարբերություն մյուսների, ունի գնահատողական բնույթ, այսինքն այն ըստ երևույթին պահանջում է որոշակի փաստերի հաստատում և արձանագրում՝ առանձին քննչական կամ այլ դատավարական գործողությունների իրականացմամբ²: Դրանից հետևում է, որ այդ ժամանակ արդեն նախնական վարույթ հարուցելու անհրաժեշտություն է առաջանում:

Վերոգրյալի հիման վրա եզրահանգում ենք, որ արդարացված կլինի նոր երևան եկած հանգամանքներով նախնական վարույթը նախատեսել միայն ՔԴՕ 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հիմքի համար՝ միաժամանակ բացառելով այս հիմքով շահագրգիռ անձանց կողմից անմիջականորեն դատարան բողոք ներկայացնելու հնարավորությունը:

Ընդ որում, նկատենք, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը³ (այսուհետ՝ Նախագիծ) որոշակիորեն զարգացել է հենց այդ ուղղությամբ: Մասնավորապես, Նախագծի 411-րդ հոդվածից հետևում է, որ նոր հանգամանքներով նախնական վարույթը նախատեսվել է Նախագծի 409-րդ հոդվածի 1-ին մասի բացառապես 7-րդ կետով սահմանված հիմքի համար, սակայն միևնույն ժամանակ պետք է նշել, որ Նախագծի 408-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 413-րդ հոդվածի համադրված վերլուծությունից փաստացի հետևում է, որ համապատասխան սուբյեկտները նշյալ հիմքով կարող են բողոք ներկայացնել նաև անմիջականորեն դատարան՝ շրջանցելով նախնական վարույթի փուլը, ինչը, մեր կարծիքով, այնքան էլ ճիշտ չէ:

Անդրադառնալով քննարկվող վարույթի առանձնահատկություններին՝ նշենք, որ համաձայն ՔԴՕ 426.5-րդ հոդվածի 1-ին մասի՝ նոր երևան եկած հանգամանքների մասին հայտարարությունները և հաղորդումներն ուղարկվում են դատախազին:

Համապատասխան նորմի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը չի հստակեցրել հայտարարություններ ու հաղորդումներ ուղարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, ինչպես նաև չի բացահայտել դրանց ձևին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները⁴:

Այս հարցերը, մեր կարծիքով, ունեն պարզաբանման կարիք:

Այսպես, հայտարարություններ և հաղորդումներ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակի վերաբերյալ քրեական դատավարության տեսության մեջ

¹Տե՛ս **Давыдов В.А.**, Возобновление уголовного судопроизводства ввиду новых или вновь открывшихся обстоятельств, Диссер. на соиск. ученой степени доктора юр. наук, М., 2011, էջ 186, **Филев Я.Е.**, Правовое регулирование возобновления уголовного судопроизводства ввиду новых и вновь открывшихся обстоятельств, Дисс. на соиск. ученой степени канд. юр. наук, Оренбург, 2007, էջեր 10-11:

² Տե՛ս նաև Դատավորի ծեռնարկ, գիտագործնական վերլուծություն (հեղ. խումբ), էջ 364:

³ Տե՛ս http://parliament.am/draft_docs5/K-0841lr.pdf

⁴ Նույնը վերաբերում է նաև Նախագծին:

իրավաբան գիտնականներն արտահայտել են տարբեր կարծիքներ: Ի.Բ. Ստերնիկը կարծում է, որ ճիշտ կլինի, եթե քրեական դատավարության օրենսդրությունում սահմանվի այն սուբյեկտների սպառիչ ցանկը, ովքեր օժտված են նոր երևան եկած հանգամանքների հիմքերով դատական ակտերի վերանայում միջնորդելու իրավունքով: Այս հարցի մասին նա գրում է. «Այդ ցանկը պետք է ունենա իրավաբանական փաստի նշանակություն. այդ ցանկում նշված անձանցից ցանկացածի դիմումը դատախազին պետք է վերջինի պարտավորեցնի անհապաղ արձագանքել համապատասխան քննության ձևով»¹:

Դրան հակառակ դիրքորոշում է արտահայտել Բ.Ս. Տետերինը, ում կարծիքով նման սպառիչ ցանկի սահմանումը ճիշտ չէ, քանի որ բոլոր դեպքերում, երբ դատախազին հայտնի են դառնում այնպիսի հանգամանքներ, որոնց երևան գալու հետ կապված օրենքը պարտադրում է վարույթի հարուցում, ապա դատախազը պարտավոր է նման վարույթ հարուցել²:

Ինչպես երևում է, քննարկվող հարցի վերաբերյալ չկա միասնական դիրքորոշում:

Ելնելով իրավական որոշակիության ապահովման նկատառումներից, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ դատախազին հայտարարություններ և հաղորդումներ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակի վերաբերյալ նորմի բացակայությունը գործնականում կարող է հանգեցնել այդ շրջանակի հայեցողական մեկնաբանման կարծում ենք, որ արդարացված կլինի, եթե օրենսդիրը համապատասխան նորմով նախատեսի այն: Այս հարցում, մեր կարծիքով, ճիշտ կլինի որոշակիորեն առաջնորդվել Գործող օրենսգրքի 176-րդ հոդվածում նախատեսված դրույթներով: Այսինքն՝ Գործող օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով նախնական վարույթ հարուցելու առիթ նպատակահարմար է դիտել ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները:

Ինչ վերաբերում է դրանց ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին, ապա, մեր կարծիքով, հիմնավոր կլինի, եթե ՔԴՕ 177-178-րդ հոդվածներում նախատեսված դրույթները վերաբերելի մասով տարածվեն նաև նախնական վարույթ հարուցելու համար առիթ հանդիսացող համապատասխան հաղորդումների նկատմամբ³:

Նկատենք, որ ՔԴՕ 426.5-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է նաև, որ դատախազի կողմից վարույթ կարող է հարուցվել միայն ստացված հաղորդումների և հայտարարությունների հիման վրա, այսինքն՝ օրենսդիրը չի նախատեսել այն իրավիճակը, երբ նոր երևան եկած հանգամանքները անմիջականորեն դատախազին են հայտնի դառնում, օրինակ, քրեական այլ գործերի քննության շրջանակներում:

Օրենսդրի տեսանկյունից՝ ստացվում է, որ այդ դեպքերում դատախազն իրավունք չունի վարույթ հարուցելու, քանի որ դրա միակ առիթը ստացված հաղորդումները և հայտարարություններն են: Այս մոտեցումը, մեր կարծիքով, հիմնավոր չէ⁴, քանի որ նման պայմաններում անհասկանալի է մնում այն հարցը, թե << գլխավոր

¹ Տե՛ս **Стерник И.Б.**, Пересмотр приговоров по вновь открывшимся обстоятельствам// Соц. Законность, № 6, 1947, էջեր 7-8:

² Տե՛ս **Тетерин Б.С.**, Возобновление дел по вновь открывшимся обстоятельствам в советском уголовном процессе, М., Госюриздат, 1959, էջ 80:

³ Այդ պարագայում կվերանա նաև «հայտարարություններ» եզրույթի կիրառման անհրաժեշտությունը:

⁴ Նկատենք, որ այս խնդիրն առկա է նաև Նախագծում:

դատախազը կամ նրա տեղակալները՝ որպես մեղադրանքի կողմի սուբյեկտներ, ինչպես են իրացնելու բողոքարկման իրենց իրավունքը: Ասվածը հաստատում են նաև մի շարք իրավաբան գիտնականներ¹, ուստի, մեր կարծիքով, այն լրացուցիչ պարզաբանման կարիք չունի:

Վերոգրյալը վկայում է, որ նախնական վարույթի հարուցման առիթների շրջանակը պետք է ընդլայնել՝ դրանց մեջ ներառելով նաև քրեական այլ գործերի քննության ընթացքում ստացված համապատասխան տեղեկությունները:

Այդ առումով առավել ընդունելի են թվում Ռուսաստանի Ղաշնության, Բելառուսի քրեական դատավարության օրենսգրքերի՝ համապատասխանաբար 415-րդ և 420-րդ հոդվածների, իսկ Լատվիայի քրեական դատավարության օրենքի 657-րդ հոդվածի 2-րդ մասերը:

Ղատախազի հետագա պարտականությունները սահմանվել են ՔԴՕ 426.5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում:

Այսպես, Գործող օրենսգրքի 426.5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է. «Սույն օրենսգրքի 426.3-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում² դատախազը որոշում է կայացնում նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցել և այդ հանգամանքների առթիվ կատարում է քննություն կամ այդ մասին հանձնարարություն է տալիս քննիչին»: Այսինքն՝ ըստ օրենսդրի՝ համապատասխան հանգամանքի առկայության դեպքում³ դատախազը⁴ կայացնում է վարույթ հարուցելու մասին որոշում և այդ առթիվ կատարում քննություն անձամբ կամ նման հանձնարարություն տալիս քննիչին: Քննարկվող դրույթից հետևում է, որ դատախազն իրավունք ունի անձամբ կատարելու քննություն համապատասխան հանգամանքի առերևույթ առկայությունը պարզելու նպատակով: Կարծում ենք՝ օրենսդրի նման մոտեցումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 103-րդ հոդվածով դատախազությանը վերապահված գործառույթներին: Մասնավորապես, համա-

¹ Տե՛ս **Зумакулов А.Д.**, Институт возбуждения производства по уголовному делу ввиду новых или вновь открывшихся обстоятельств как гарантия прав и свобод личности, дисс. канд. юр. наук, Кисловодск, 2005, էջ 60: **Анашкин Г.З., Перлов И.Д.**, Возобновление дел по вновь открывшимся обстоятельствам, М., Юрид. лит., 1982, էջ 14, **Блинов В.М.**, Возобновление дел по вновь открывшимся обстоятельствам, изд-во юрид. лит., М., 1968, էջ 86, **Цатурян М.А.**, Демократические гарантии возобновления уголовных дел по вновь открывшимся обстоятельствам, Ереван, 1981, էջ 78, **Громов Н.А.**, Вновь открывшиеся обстоятельства в уголовном процессе, М., Спарк, 1999, էջ 138, Уголовный процесс, учебник для студентов вузов /под ред. **В.П. Божьева/**, М., Спарк, 2003, էջ 564, Советский уголовный процесс. Вопросы особенной части, под ред.: **Корнуков В.М.**, Изд-во Саратов. ун-та, Саратов, 1988, էջ 178):

² Ինչպես արդեն նշել ենք, մեր կարծիքով, նպատակահարմար չէ նախնական վարույթ հարուցել նոր երևան եկած հանգամանքների բոլոր հիմքերով:

³ Կարծում ենք՝ «առկայության դեպքում» բառակապակցությունը այնքան էլ ճիշտ չէ, քանի որ հանգամանքի առկայությունը պարզելը հանդիսանում է նախնական վարույթի նպատակը, որին կարելի է հասնել միայն քննությունն իրականացնելու արդյունքում, այլ ոչ դրա հարուցումից առաջ: Այդ համատեքստում ընդունելի մոտեցում է ցուցաբերվել Նախագծում, որի 411-րդ հոդվածի 2-րդ մասում խոսվում է հանգամանքի ոչ թե առկայության, այլ առերևույթ առկայության մասին:

⁴ Ի դեպ, նշենք, որ մինչ 2008 թվականի օրենսդրական փոփոխությունները (26.12.08, ՀՕ-237-Ն) նախնական վարույթ հարուցելու լիազորությամբ օժտված էր նաև հավատարմագրված փաստաբանը, սակայն համապատասխան փոփոխություններից հետո այդ նորմերը հանվեցին:

պատասխան հողվածի վերլուծությունից հետևում է, որ դատախազը օժտված չէ անձամբ քննություն իրականացնելու, այսինքն՝ առանձին քննչական և այլ դատավարական գործողություններ իրականացնելու գործառնությունով: Դա էր նաև այն հիմնական պատճառներից մեկը, որ 2007 թվականի օրենսդրական փոփոխություններով (28.11.07, ՀՕ-270-Ն) ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, որը դատախազին օժտել էր վերոհիշյալ գործառնությամբ:

Նկատենք, որ ի տարբերություն Գործող օրենսգրքի՝ Նախագծում այս խնդիրն արդեն շտկվել է¹:

ՔԴՕ 426.5-րդ հոդվածի 2-րդ մասի հետ կապված ընդգծենք նաև, որ օրենսդիրը չի նախատեսել, թե դատախազը հաղորդումը ստանալուց հետո ինչպիսի ժամկետներում է պարտավոր վարույթ հարուցելու մասին որոշում կայացնել²: Այդ առումով Ն.Ա. Գրոմովը նշում է. «Դատախազը պարտավոր է նոր երևան եկած հանգամանքների հատկանիշների վերաբերյալ ... հաղորդումն ընդունել և դրանով որոշում կայացնել 10, իսկ բացառիկ դեպքերում՝ մեկ ամսից ոչ ուշ»³, իսկ Ա.Դ. Ջումաևկուլովի կարծիքով՝ համապատասխան դեպքերում դատախազի կողմից վարույթ հարուցելու մասին որոշումը պետք է կայացվի տվյալների ստացման պահից երեք օրվա ընթացքում, իսկ բացառիկ դեպքերում, երբ որոշում կայացնելու համար անհրաժեշտ կլինի պահանջել լրացուցիչ տվյալներ կամ ձեռնարկել այլ միջոցներ, ապա 10 օրվա ընթացքում⁴:

Հաղորդումների քննարկման ժամկետը նախատեսելիս, կարծում ենք, ճիշտ կլինի ղեկավարվել ՔԴՕ 180-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետներով: Մասնավորապես, վերջինում նշվում է, որ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Այսինքն՝ կարծում ենք, որ արդարացված կլինի, եթե հաղորդման հիման վրա նախնական վարույթը հարուցվի անհապաղ, իսկ առիթի օրինականությունը և հիմքի առերևույթ առկայությունը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրա ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Ժամկետների հետ կապված՝ հարկ ենք համարում նշել նաև, որ քննարկվող վարույթի արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից արդարացի կլինի, եթե օրենսդիրը ամրագրի հարուցված վարույթի տևողության առավելագույն ժամկետները, ինչպես նաև դրանց հաշվարկման սկզբի ու ավարտի պահերը (նույնը վերաբերում է նաև Նախագծին):

Գտնում ենք՝ այս հարցում ճիշտ կլինի մասնակիորեն առաջնորդվել ՔԴՕ 197-րդ հոդվածով սահմանված նորմերով և սահմանել, որ հարուցված վարույթը պետք է ավարտվի երկամյա ժամկետում, իսկ բացառիկ դեպքերում կարող է երկարացվել ևս երկու ամսով: Բացի այդ, մեր կարծիքով, իրավաչափ կլինի, եթե օրենսդիրը ամրագրի նաև, որ այդ ժամկետը հաշվվում է վարույթ հարուցելու մասին որոշում

¹Տե՛ս Նախագծի 411-րդ հոդվածի 2-րդ մասը:

²Ընդ որում, նկատենք, որ այս խնդիրն առկա է նաև Նախագծում:

³Տե՛ս **Громов Н.А.**, Вновь открывшиеся обстоятельства в уголовном процессе. М., Спарк, 1999, էջեր 143-144:

⁴Տե՛ս **Зумакулов А.Д.**, Институт возбуждения производства по уголовному делу ввиду новых или вновь открывшихся обстоятельств как гарантия прав и свобод личности, дисс. канд. юр. наук, Кисл., 2005, էջ 151:

կայացնելու օրվանից և ավարտվում դատարան բողոք ներկայացնելու կամ վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու օրը:

Քննարկվող դրույթի՝ ՔՂՕ 426.5-րդ հոդվածի 2-րդ մասի ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև նոր երևան եկած հանգամանքներով վարույթ հարուցելու մասին որոշման բողոքարկման հարցին:

Մասնավորապես, տեղին է նշել, որ այդ առիթով ՀՀ վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ նաև Վճռաբեկ դատարան) արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «...Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթի հարուցումը նպատակ է հետապնդում հաստատել կամ հերքել դատախազին ուղղված հայտարարության կամ հաղորդման մեջ նշված նոր երևան եկած հանգամանքների առկայությունը: Նշված որոշումը կայացվում է փաստի (հայտարարության կամ հաղորդման) առթիվ, և ինքնին չի առնչվում քրեական դատավարության ոլորտ ներգրավված որևէ անձի իրավունքների և օրինական շահերի հետ: Հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու վերաբերյալ դատախազի որոշումը դատական բողոքարկման առարկա լինել չի կարող»¹:

Փաստորեն ստացվում է, որ ըստ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային դիրքորոշման՝ դատախազի կողմից վարույթ հարուցելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկման ենթակա չէ:

Գործող օրենսգրքի 426.5-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանվել է. «Եթե հաղորդումն ստացած դատախազը նոր երևան եկած հանգամանքների կապակցությամբ վարույթ հարուցելու համար հիմքեր չի գտնում, ապա նա պատճառաբանված որոշմամբ մերժում է վարույթ հարուցելը: Այդ որոշումը հաղորդվում է շահագրգիռ անձանց, որոնք այն կարող են բողոքարկել վերադաս դատախազին»:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նախ քննարկել այն հարցը, թե ովքեր կարող են համարվել շահագրգիռ անձինք, որոնց հաղորդվում է այդ որոշումը:

Այսպես, Ն.Ա. Գրոմովի կարծիքով՝ վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման մասին պետք է տեղեկացնել դատապարտյալներին, արդարացվածներին կամ այն անձանց, որոնց նկատմամբ դատարանը կարճել է գործը, ինչպես նաև շահագրգիռ այլ անձանց²: Նույն հարցի շուրջ Վ.Ի. Ռադչենկոն նշում է, որ ամեն դեպքում նրանց թվում պետք է լինեն դատապարտյալը և այն անձը, ով հաղորդում է ներկայացրել դատախազություն³:

Մեր կարծիքով՝ շահագրգիռ անձ պետք է համարվի դատապարտյալը, արդարացվածը, դատավարության մասնակից եղած տուժողը կամ ցանկացած այլ անձ, ով մասնակցել է քրեական գործով վարույթին, և ում առնչվում են նոր երևան եկած հանգամանքները, ինչպես նաև այդպիսին պետք է դիտել նաև հաղորդումը տված անձին, եթե նա չի եղել նշյալ սուբյեկտներից որևէ մեկը: Նման մոտեցումը պայմանավորված է արդարացի դատավարություն ապահովելու անհրաժեշտությամբ:

Այդ համատեքստում, կարծում ենք, հիմնավոր չէ Նախագծի 411-րդ հոդվածի 3-րդ մասն այն առումով, որ համապատասխան որոշմանը ծանոթանալու, ինչպես

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 21-ի քրեական գործով թիվ ԵԱՆՂ/0013/11/08 որոշումը, կետեր 19, 20:

² Տե՛ս **Громов Н.А.**, Вновь открывшиеся обстоятельства в уголовном процессе, М., Спарк, 1999, էջ 144:

³ Տե՛ս Уголовный процесс, Учебник для вузов под общей редакцией кандидата юридических наук, доцента **В.И. Радченко**, М., Юстицинформ, 2006, էջ 594:

նաև այն վերադաս դատախազին բողոքարկելու իրավունք է նախատեսել միայն հաղորդումը ներկայացրած անձի համար, ով կարող է և չլինել դատապարտյալը, արդարացվածը կամ քրեական գործով շահագրգիռ այլ անձը: Այս խնդիրն առկա է նաև Գործող օրենսգրքի 426.6-րդ հոդվածի, ինչպես նաև Նախագծի 412-րդ հոդվածի 3-րդ մասերում:

Քննարկվող դրույթի հետ կապված՝ հարկ է նշել նաև, որ օրենսդիրը չի նախատեսել վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը շահագրգիռ անձանց ուղարկելու, ինչպես նաև այդ որոշումը վերադաս դատախազին բողոքարկելու ժամկետները, չի ամրագրել, թե վերադաս դատախազը ինչ ժամկետներում է քննում բողոքը, ինչպիսի որոշումներ կարող է կայացնել, պարզ չէ նաև այն, որ եթե վերջինս մերժում է բողոքը, ապա արդյոք շահագրգիռ անձն իրավունք ունի այդ որոշումը բողոքարկելու դատարան¹:

Ընդ որում, նկատենք, որ ի տարբերություն վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման՝ թե՛ Գործող օրենսգրքով, թե՛ Նախագծով համապատասխան անձանց ընդհանրապես իրավունք չի վերապահվել բողոքարկելու վարույթը կարճելու մասին որոշումը (Գործող օրենսգրքի 426.6-րդ, Նախագծի 412-րդ հոդվածների 3-րդ մասեր), ինչը, մեր կարծիքով, անընդունելի է, քանի որ չի ապահովվում այդ անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանությունը: Նման մոտեցումը իրավաչափորեն քննադատվում է նաև տեսությունում²:

Այդ կապակցությամբ ցանկանում ենք հատկապես մատնանշել ՌԴ սահմանադրական դատարանի հետևյալ դիրքորոշումը. «Նոր երևան եկած հանգամանքներով վարույթի նորոգումը՝ որպես դատավարության հատուկ փուլ, ենթադրում է գործի նոր ուսումնասիրություն, ինչի անհրաժեշտությունը պայմանավորված է թույլ տրված դատական սխալով, որը չի եղել կամ չէր կարող վաղօրոք հայտնի լինել: Այդ կապակցությամբ խնդիր է առաջանում այդ գործին մասնակցած անձանց իրավունքների և պարտականությունների նորովի որոշման վերաբերյալ, ինչը նշանակում է, որ անընդունելի է, որ նոր երևան եկած հանգամանքներով վարույթի հարուցումը մերժելու, ինչպես նաև վարույթը կարճելու մասին դատախազի որոշումն ունենա վերջնական որոշման ուժ, և հնարավոր չլինի այն բողոքարկել դատարան»³:

Այսպիսով, վերը մատնանշված խնդիրների լուծումը, մեր կարծիքով, ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, քանի որ այդ խնդիրները անմիջականորեն առնչվում են մարդու հիմնարար իրավունքներին: Ուստի կարծում ենք, որ արդարացված կլինի, եթե օրենսդիրը, առաջնորդվելով ՔԴՕ 185-րդ, ինչպես նաև 290-րդ հոդվածներով, ամրագրի բողոքարկման այնպիսի ձևեր կարգ, որով քննարկված բոլոր խնդիրները կլուծվեն:

ՔԴՕ 426.6-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվել է, որ նոր երևան եկած հանգամանքների քննությունն ավարտելուց հետո դատական ակտը վերանայելու համար հիմքերն առկա համարելով՝ դատախազը քննության արդյունքներով կազմված

¹ Հավելենք, որ բացի վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը համապատասխան անձանց ուղարկելու ժամկետների նախատեսման հարցից, նշված մյուս բոլոր խնդիրներն առկա են նաև Նախագծում:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, «Հատուկ մաս», (2-րդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), դասագիրք բուհերի համար (խմբագրությամբ **Գ.Ս. Ղազինյանի**), Երևանի համալս. հրատ., Երևան, 2006թ., էջ 422:

³ Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2002 թվականի ապրիլի 9-ի թիվ 28-Օ որոշումը, կետ 3:

եզրակացությունն ուղարկում է գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին: Իսկ սույն հոդվածի 2-րդ մասում նշվում է. «Գլխավոր դատախազը, նրա տեղակալը, գործի վերանայման հիմքերն առկա համարելով, բողոք են ներկայացնում դատարան՝ դրան կցելով համապատասխանաբար քննության կամ ուսումնասիրության ակտերը»¹:

Համապատասխան նորմերի բովանդակությունից փաստացի հետևում է, որ եթե նոր երևան եկած հանգամանքներով վարույթ հարուցվելու և իրականացված քննության արդյունքների հիման վրա դատախազը կարծում է, որ առկա են դատական ակտի վերանայման հիմքեր, ապա կազմում է «դրական» եզրակացություն և այն ուղարկում ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին:

Այստեղ պետք է նշել, որ դատախազի «դրական» եզրակացությունը թե՛ բովանդակային, թե՛ ձևական առումով ինքնին հիմք չէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման դատական վարույթ հարուցելու համար, քանի որ այն անցնում է ևս մեկ գտման օղակ՝ ի դեմս ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի, ովքեր էլ այդ եզրակացության հիման վրա բողոք են ներկայացնում իրավասու դատարան:

Համեմատության համար նշենք, որ ի տարբերության ներպետական օրենսդրության՝ օրինակ՝ ՌԴ-ում բացակայում է գտման այս օղակը: Մասնավորապես, ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ քննության ավարտից հետո հիմքերի առկայության դեպքում դատախազը համապատասխան եզրակացությունը անմիջապես ուղարկում է իրավասու դատարան:

Ամեն դեպքում հարկ է նշել, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված մոտեցումը, մեր կարծիքով, պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը ՔԴՕ 426.2-րդ հոդվածով քրեական հետապնդման մարմիններից միայն ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին է օժտել նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու իրավունքով:

Այսպիսով, ամփոփելով քննարկվող վարույթի վերաբերյալ մեր կատարած ուսումնասիրությունները՝ առաջարկում ենք.

ա) ՔԴՕ 426.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «այդ հանգամանքի» բառերից առաջ լրացնել «սույն օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 3-րդ կետերի, ինչպես նաև 426.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի դեպքում» բառերը:

բ) ՔԴՕ 426.5-րդ և 426.6-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 426⁵. Նոր երևան եկած հանգամանքներով նախնական վարույթի հարուցում

1. Սույն օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված նոր երևան եկած հանգամանքներով նախնական վարույթ հարուցելու առիթներն են ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները, ինչպես նաև տեղեկությունները, որոնք ստացվել են քրեական այլ գործերի քննության ընթացքում: Հաղորդումների ձևի և բովանդակության նկատմամբ վերաբերելի մասով (mutatis mutandis) կիրառվում են սույն օրենսգրքի 177-178-րդ հոդվածներով սահմանված

¹Բողոքին ներկայացվող պահանջները նախատեսված են ՔԴՕ 426.7-րդ հոդվածում, ուստի, մեր կարծիքով, այստեղ սահմանված «դրան կցելով համապատասխանաբար քննության կամ ուսումնասիրության ակտերը» բառերն արդեն ավելորդ են:

նորմերը:

2. Սույն օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված նոր երևան եկած հանգամանքի առերևույթ առկայության դեպքում դատախազն անհապաղ, իսկ առիթի օրինականությունը և հիմքի առերևույթ առկայությունը ստուգելու անհրաժեշտության դեպքում հաղորդման ստացման պահից 10 օրվա ընթացքում որոշում է կայացնում նոր երևան եկած հանգամանքների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին և այդ հանգամանքների առթիվ քննություն կատարելու մասին հանձնարարություն է տալիս քննիչին:

3. Եթե դատախազը նոր երևան եկած հանգամանքների կապակցությամբ վարույթ հարուցելու համար առերևույթ հիմքեր չի հայտնաբերում, ապա նա պատճառաբանված որոշմամբ մերժում է վարույթ հարուցելը: Որոշման պատճենը եռօրյա ժամկետում ուղարկվում է շահագրգիռ անձանց, ովքեր կարող են այն ստանալու պահից 7-օրյա ժամկետում բողոքարկել վերադաս դատախազին: Վերադաս դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կամ մերժում է բողոքը, կամ վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է վարույթ նոր երևան եկած հանգամանքների վերաբերյալ և այդ առթիվ քննություն կատարելու մասին հանձնարարություն է տալիս քննիչին: Վերադաս դատախազի կողմից բողոքը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատարան սույն օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Նոր երևան եկած հանգամանքների վերաբերյալ հարուցված վարույթը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում սույն օրենսգրքի 426.6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով դատարան բողոք ներկայացնելու կամ վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու օրը: Բացառիկ դեպքերում, երբ դա պահանջում է արդարադատության շահը, սույն մասում սահմանված երկամսյա ժամկետը ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից կարող է երկարացվել առավելագույնը երկու ամսով:

Հոդված 426⁶. Դատախազի գործողությունները նոր երևան եկած հանգամանքներով քննության ավարտից հետո

1. Նոր երևան եկած հանգամանքներով քննության ավարտից հետո դատական ակտը վերանայելու համար հիմքերն առկա համարելով՝ դատախազը քննության արդյունքներով կազմում է եզրակացություն և ուղարկում ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին:

2. ՀՀ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը, դատական ակտի վերանայման համար հիմքերն առկա համարելով, բողոք է ներկայացնում իրավասու դատարան:

3. Դատական ակտը վերանայելու համար հիմքեր չլինելու դեպքում դատախազը պատճառաբանված որոշմամբ կարճում է վարույթը: Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում ուղարկվում է շահագրգիռ անձանց, ովքեր կարող են ստորադաս դատախազի որոշումը բողոքարկել վերադաս դատախազին, իսկ ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի որոշումը՝ դատարան սույն օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով: Բողոքը վերադաս դատախազին ներկայացնելու, նրա կողմից այն քննարկելու, ինչպես նաև բողոքը մերժելու մասին վերադաս դատախազի որոշումը դատարան բողոքարկելու կարգի և ժամկետների նկատմամբ կիրառելի են սույն օրենսգրքի 426.5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմերը»:

ПРОБЛЕМЫ, ВОЗНИКАЮЩИЕ НА ЭТАПЕ ПРЕДВАРИТЕЛЬНОГО ПРОИЗВОДСТВА ПО ПЕРЕСМОТРУ ОКОНЧАТЕЛЬНОГО СУДЕБНОГО АКТА ПО ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ОБСТОЯТЕЛЬСТВАМ

Армен Оганесян

*Советник Председателя Кассационного Суда РА,
Ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,
кандидат юридических наук (armen_hovhannisian@mail.ru)*

Настоящая статья посвящена анализу ряда вопросов, возникающих на этапе предварительного производства по пересмотру окончательного судебного акта по вновь открывшимся обстоятельствам.

Обращаясь к поводам для инициирования предварительного производства, автор утверждает, что лица, имеющие право ходатайствовать о проведении такого производства, должны быть предусмотрены в законодательном порядке. Кроме этого, нужно определить требования к форме и содержанию таких ходатайств. Автор также полагает, что основания для инициации предварительного производства должны быть расширены, включая информацию, полученную в ходе расследования других уголовных дел.

Принимая во внимание конституционные функции прокуратуры, автор указывает на проблематичность того факта, что законодатель уполномочил прокурора для выяснение наличия соответствующего обстоятельства провести расследование лично.

На основе анализа вопросов, возникающих в ходе предварительного производства, автор, указывает, что законодательство не предусматривает сроки как для отправки решения об отказе возбуждения предварительного производства заинтересованным сторонам, так и для обжалования таких решений вышестоящему прокурору, кроме того, закон не предусматривает сроки, в которых вышестоящий прокурор должен обсуждать такие жалобы, а также не определяет перечень решений, которые могут быть приняты при рассмотрении таких жалоб. По мнению автора неясно, имеет ли сторона право на обжалование решения (об отказе в возбуждении предварительного производства) вышестоящего прокурора в судебном порядке.

Одновременно, утверждается, что в отличие от отказа в возбуждении процедуры, заинтересованные лица вообще не имеют права на обжалование решения о прекращении производства. Автор считает, что это неприемлемо, так как результатом является невозможность гарантировать конституционные права.

В статье также анализируются положения Проекта уголовно-процессуального кодекса, регулирующие этот вопрос, и в результате сделаны предложения по совершенствованию законодательства.

THE ISSUES, ARISING ON THE STAGE OF PRELIMINARY PROCEEDINGS ON REVIEW OF FINAL JUDICIAL ACT DUE TO NEWLY DISCOVERED CIRCUMSTANCES

Armen Hovhannisyan

*Adviser to the Chairman of the RA Court of Cassation,
Assistant of the YSU Chair of Criminal procedure and Criminalistics,
Candidate of Laws (armen_hovhannisian@mail.ru)*

The present article is devoted to the analysys of a number of issues, arising on the stage of preliminary proceedings on review of final judicial act due to newly discovered circumstances. In particular, having analysed the ground for such review, the author concludes, that it is unpractical to prescribe such proceedings where the ground constitutes criminal offences, which are determined in a court judgment, whereas the bases of such proceedings are the need to determine the existence of such circumstances, which automatically ceases to exist.

Turning to the reasons for initiating preliminary proceedings, the author states, that the list of persons, elligible to apply for such proceedings should be clearly determined, besides it there is a need to determine the form and substance of such applications. The author also opines, that reasons with the initiation of preliminary proceedings should be enlarged, including information, obtained during the investigation of other criminal cases.

Given the constitutional functions of the prosecutorial service the author sees as problematic the fact, that the legislator has authorised the prosecutor to investigate the existence of such reasons personally.

To increase the effectiveness of the procedure in question the author proposes to prescribe the time limits for the discussion of the applications and the initiated production, determining the starting and ending dates for the latter.

Based on the analysis of the issues arising during the preliminary proceedings the author points out that the legislation does not provide time limits for the decision to reject the initiation of such proceedings to be sent to the interested parties, neither does it provide time limits for appealing such a decision to a superior prosecutor, besides it, the legislation does not determine time limits for the appeal's discussion by the superior prosecutor and the decisions that can be made on appeal. According to the author it is unclear whether interested parties have a right to appeal a decision (to reject the initiation of preliminary proceedings) of superior prosecutor in the court.

Simultaneously, it is stated, that in contrast to the refusal to initiate proceedings the person in question is not entitled to appeal the decision to stop the proceedings. The author regards this to be unacceptable as the result is failure to guarantee the constitutional rights.

The research also analyses the provisions of the draft code of criminal procedure governing the subject, and as a result suggestions are made as to the amendment of the legislative provisions.

Բանալի բառեր – նոր երևան եկած հանգամանքներ, նախնական վարույթ, վարույթ հարուցելու մասին որոշում, շահագրգիռ անձ, վարույթը կարճելու մասին որոշում, գլխավոր դատախազ և նրա տեղակալ

Ключевые слова – вновь открывшиеся обстоятельства, предварительное производство, решение о возбуждении производства, заинтересованное лицо, решение о прекращении производства, главный прокурор и его заместитель

Keywords – newly discovered facts, preliminary production, a decision to initiate production, interested person, a decision to dismiss production, the chief prosecutor and his deputy